[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
9	Հոկտեմբեր	2018 թ.		Բ	2640678430
[4] Մատուցման ամսաթիվը					
9	Հոկտեմբեր	2018 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	6	3	6	7	8	1		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ			N 2470103343210000						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	N 900011000834							
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծավալակշռը բջջանը	Միավորի գինը	Ձեռչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 37151518 քր գործով շինարարատեխնիկական, դատահաշվապահական և դատատնտեսագիտական փորձաքննություն	հատ	1	360000		360000
Ընդամենը						360000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

09/10/2018 11:48:49

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

շինարարատեխնիկական, դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

18.05.2018թ. ք.Եղեգնաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Հ.Բ. Մարգարյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 37151518 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում Վերնաշեն համայնքի ղեկավարի կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հաայնքային բյուջեից յուրացումներ կատարելու դեպքի առթիվ քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ համաձայն համայնքապետարանի կողմից կնքված պայմանագրերի համայնքապետարանը Եղեգնաձոր քաղաքում գործող ԱՁ Մարգար Կարապետյանի, ԱՁ Գրիգոր Հովհաննիսյանի, ԱՁ Լևոն Միերյանի շինանյութերի խանութներից ձեռք է բերել համապատասխան շինանյութեր՝ համայնքապերարանի վարչական շենքը, մշակույթի տունը և համայքնում շինարարական և այլ անհրաժեշտ աշխատանքներ կատարելու նպատակով, համապատասխան գումարները փոխանցվել են նշված ԱՁ-ների հաշվեհամարներին, սակայն Վերնաշեն համայնքի նախկին ղեկավարի կողմից նախորոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն փոխանցված գումարների 10 տոկոսը նշված ԱՁ-ների կողմից հետ է վերադարձվել:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Վերնաշեն համայնքի նախկին ղեկավար Միքայել Բաղդասարյանի կողմից 2014-2016 թվականներին առանց նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության համայնքի կարիքների համար կազմակերպվել և իրականացվել են մի շարք շինարարական աշխատանքներ, որոնց կատարման համար անհրաժեշտ նյութերը ձեռք են բերվել մի շարք ԱՁ-ներից, իսկ աշխատանքները կատարվել են անհատ անձան ներգրավմամբ՝ առանց պայմանագրերի կնքման:

Մասնավորապես պարզվել է, որ համայնքապետարանի կողմից 2014-2016թթ. ընթացքում ձեռք են բերվել ընդհանուր 7.501.950 ՀՀ դրամի շինարարական ապրանքներ, հաշիվ ապրանքագրերի մի մասում՝ 4.266.950 ՀՀ դրաի չափով, նշված է, թե կոնկրետ ինչ ապրանքներ են ձեռք բերվել և համայնքի ղեկավար Միքայել Բաղդասարյանը հայտնել է, թե դրանք որ օբյեկտներում են օգտագործվել, այն է՝ համայնքապետարանի վարչական շենքի և մշակույթի տան ներքին վերանորոգման աշխատանքներում, իսկ մի մասում՝ 3.235.000 ՀՀ դրամի չափով, նշումներ առկա չեն մատակարարված ապրանքների տեսակի, քանակի, քաշի և գների վերաբերյալ: Նշվածի առնչությամբ համայնքի ղեկավարը հայտնել է, որ այդ

դեպքերում ևս մատակարարվել են շինարարական նյութեր՝ ստույգ տեսակ և քանակ չի կարողացել նշել, հայտնել է, որ դրանք օգտագործվել են նույն օբյեկտների՝ համայնքապետարանի վարչական շենքի և մշակույթի տան վերանորոգման աշխատանքների իրականացման ժամանակ:

Պարզվել է նաև, որ 16.12.2014թ. համայնքապետարանը ԱՁ Մարգար Կարապետյանից թիվ 66 հաշիվ ապրանքագրով ձեռք է բերել 1.2մմ 1*2 մմ չափսի 80 հատ թիթեղ, ընդհանուր 800.000 ՀՀ դրամ արժեքով և 1 խմ. տախտակ՝ 180.000 դրամ արժեքով: Կատարված նախաքննության ընթացքում սակայն պարզվել է, որ համայնքապետարանին մատակարարվել են, ոչ թե 1.2մմ 1*2 մմ չափսի թիթեղներ, այլ 0,5 մմ հաստության 185 քմ. տանիքի թիթեղներ, ինչպես նաև 100 քմ. ցինկապատ 0,5 մմ հաստության թիթեղ՝ տանիքի ջրահեռացման և ջրհորդանների նորոգման համար, այդ մասին տվյալներ հայտնել են համայնքի ղեկավարը, ԱՁ Մարգար Կարապետյանը և համապատասխան աշխատանքներն իրականացրած անձը:

Նշված վերանորոգման աշխատանքները կատարվել են համայնքապետարանի կողմից մասնավոր անձանց ներգրավմամբ, որոնց հետ պայմանագրեր չեն կնքվել: Աշխատանքների կատարմանը ներգրավված անձանց վճարվել է 1.100.000 ՀՀ դրամ, որից 970.000 ՀՀ դրամ կանխիկ գումարի, մնացածը տարբեր ապրանքների տեսքով:

Համայնքի ղեկավար Միքայե Բաղդասարյանը նշել է, որ աշխատանքները կատարվել են առանց նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և համապատասխան ընկերությունների ներգրավման, այն պատճառով, քանի որ համայնքի բյուջեի միջոցները սուղ են եղել, իսկ եթե 'օրենքով սահմանված համապատասխան ընթակարգերն իրենց կողմից պահպանվեին, ապա նույն այդ աշխատանքների կատարման վրա ավելի շատ գումարներ հարկ կլիներ ծախսելու:

Նկատի ունենալով, որ համապատասխան աշխատանքները համայնքապետարանի կողմից կատարվել են առանց նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, պայմանագրերի կնքման, շինարարական ապրանքների մատակարարման ապրանքագրերի մի մասում արտացոլված չէ, թե կոնկրետ ինչ տեսակի և քանակությամբ ապրանքեր են մատակարարվել համապատասխան գումարների դիմաց, քրեական գործով անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու շինարարատեխնիկական, դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր փորձաքննություն, համայնքապատերանի կողմից համայնքային բյուջեի միջոցներով կատարված ծախսերի իրավաչափությունը և դրանց արդյունքում համայնքապետարանին վնաս պատճառված լինելու հանգամանքը պարզելու համար:

Ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ, 246-րդ և 248-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 37151518 քրեական գործով նշանակել շինարարատեխնիկ**ական,** ապրանքագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննություն, **որի** կատարումը հանձնարարել «ԱՎ էքսպերտ» ՍՊԸ համապատասխան փորձագետներին:

2. Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

α 1 ա/ ինչ տեսակ վերանորոգման աշխատանքներ են կատարվել Վերնաշեն համայնքի վարչական շենքում և մշակույթի տանը, ինչ տեսակի և արժեքի շինարարական նյութեր են օգտագործվել դրանցում, որքան է կազմում կատարված աշխատանքների ընդհանուր արժեքը,

α 2 բ/ արդյոք նշված աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվել են քրեական գործում առկա, ընդհանուր 4.266.950 ՀՀ դրամ արժեքով հաշիվ ապրանքագրերով մատակարարված շինարարական ապրանքները և նյութերը, թե ոչ, եթե ոչ ապա որ և ինչ քանակության նյութերը և ապրանքները չեն օգտագործվել և որքան է կազմում դրանց տարբերության արդյունքում պատճառված վնասը,

α 3 գ/ եթե նշված օբյեկտներում կատարված վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործված շինարարական նյութերի և ապրանքների արժեքը գերազանցում է 4.266.950 ՀՀ դրամը, ապա որքան և ինչ արժեքով հավելյալ շինարարական նյութեր և ապրանքներ են օգտագործվել դրանցում, արդյոք նշված օբյեկտներում կատարված վերանորոգման աշխատանքների վրա կարող է ծախսված լինել ընդհանուր 7.501.950 ՀՀ դրամի շինարարական նյութեր և ապրանքներ,

α 4 դ/ որքան է կազմում փաստացի կատարված աշխատանքների մեջ օգտագործված ապրանքների և նյութերի արժեքի տարբերությունը հաշիվ ապրանքագրերով մատակարարված ընդհանուր 7,501.950 ՀՀ դրամ արժեքի համեմատ,

α 5 ե/ ինչ քանակության և տեսակի տանիքի և այլ տեսակ թիթեղներ են օգտագործվել համայնքապետարանի մշակույթի տան տանիքի վերանորոգման աշխատանքներում,

α 6 զ/ որքան է կազմում փաստացի օգտագործված թիթեղների արժեքի տարբերությունը 16.12.2014թ. ԱՁ Մարգար Կարապետյանի կողմից տրված թիվ 66 հաշիվ ապրանքագրում նշված թիթեղի արժեքի՝ 800.000 ՀՀ դրամի համեմատ,

α 7 է/ հաշվապահական հաշվառման առումով ինչ խախտումներ և հետևանքներ է առաջացնում հաշիվ ապրանքագրերում մատակարարվող ապրանքների մասին նշումներ չկատարելը, փաստացի նշված ապրանքի փոխարեն այլ ապրանքներ մատակարարելը, ով է պատասխանատու դրանց պատշաճ լրացման համար, արդյոք համայնքապետարանի կողմից խախտումներ կատարվել են նման թերի հաշիվ ապրանքագրերի դիմաց վճարումներ կատարելու հետ կապված,

ը/ գնումների գործնթացի ինչ խախտումներ են թույլ տրվել համայնքապետարանի կողմից նշված աշխատանքներն առանց նախագծանախահաշվային փաստաթղթերի և շինարարական աշխատանքների կատարման կապալի պայմանեգրերի կնքման կատարելը, համայնքապետարանի հիշյալ գործողությունների արդյունքում համայնքապետարանին վնաս պատճառվել է, թե ոչ,

թ/ արդյոք տնտեսագիտական տեսանկյունից՝ համայնիք բյուջեի միջոցները խնայելու առումով հիմնավորված է եղել նշված աշխատանքներն առանց նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, գնումների ընթացակարգերի խախտման և համապատասխան պայմանագրերի կնքման կատարելը

ը/ աշխատանքների կատարմանը ներգրաված անձանց վճարված 1.100.000 ՀՀ դրամ աշխատավարձից՝ 970.000 ՀՀ դրամը կանխիկ գումարի, մնացածը ապրանքների տեսքով կատարված փոխհատուցման, պետ.բյուջե վճարման ենթակա որքան եկամտային հարկ է առաջանում:

3. Փորձագետներին խնդրել պատասխանելու նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չեն առաջադրվել, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է էական նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեք ապահովման համար:

4. Փորձագետին տրամադրել փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ նյութերը:

ՀԿԳ քննիչ՝ **Հ.Բ. Մարգարյան**